ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

26.06.2013թ.
202-ի 4

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Երեւանի Անգլիական այգու (Սունդուկյանի այգու) բարեկարգման աշխատանքների ընթացքում Իտալիայի փողոցի կողմից (Կոնգրես հյուրանոցի կողմից) մուտքի աստիճանների կողքին շինարարական աշխատանքները իրականացնող կազմակերպությունը կառուցել էր նաեւ թեքահարթակ: Սակայն, թեքահարթակը ապամոնտաժվեց, եւ այժմ այգու մուտքի աստիճանները համալրված չեն թեքահարթակով: Արդյունքում, այգի մուտք գործելը դժվարամատչելի է մակական սայլակների, ինչպես նաեւ հաշմանդամություն ունեցող այն անձանց համար, ովքեր օգտվում են սայլակից:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ինչու՞ ապամոնտաժվեց Իտալիայի փողոցի կողմից Անգլիական այգու մուտքի թեքահարթակը,
2. Նախատեսվու՞մ է արդյոք կառուցել Իտալիայի փողոցի կողմից Անգլիական այգու մուտքի թեքահարթակ,
3. Եթե այո, ապա ե՞րբ, եթե ոչ, ապա ինչու՞:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան